ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...

ԱՄՓՈՓԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դուրս գրիր բարդ և ածանցավոր բառերը՝ բաղադրիչների բաժանելով:

Շատերի համար դա մենաստան է Վասպուրականում. լեռների գրկում յոթնագմբեթ վանք, յոթնանուն խորան և ոմանց համար ամառանոց չքնաղ՝ բնության ու մարդու կողմից սքանչելագործված: Մեկ ուրիշը կասի՝ Խրիմյան Հայրիկի արծվաբույնն է, ուր մեծ հայրենասեր վարդապետը հիմնեց իր Ժառանգավորաց վարժարանը:

Մեկի համար վանք է Վարագը, ուխտատեղի և աղոթավայր, մյուսի համար՝ հնություն հազարամյա, հուշարձան թանկագին... Իսկ ինձ համար Վարագը երգ է, երազ, կախարդական հեքիաթ...

Նմուշ՝ վարդապետ

Ածանցավոր բառեր	Բարդ բառեր
մեն–(ա)–ստան	յոթն–(ա)–գմբեթ

2. Բաղադրիչների միացումով կազմի՛ր բարդ բառեր:

Ծաղիկ + *փունջ*, *արև* + *ծաղիկ*, *անտառ* + *ծածկ*, *սաղարթ* + *անտառ*, *հեր* + *արձակ*, *շեկ* + *հեր*, *վարդ* + *թուփ*, *քաջ* + *վարդ*, *փայտ* + *շեն*, *բուն* + *փայտ*, *ձի* + *սայլ*, *բեռ* (*ն*) + *ձի*:

3. Գրի՛ր շարադրանք՝ «Մայրենիի իմ դասագիրքը» խորագրով: